ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2019 թվականի N 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N 2-Ն որոշման հավելվածի 2-րդ մասի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՎԱՂԻՆԱԿ ԱԲՐԵՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՇԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ԵՍԱՅԻ ԵՍԱՅԱՆ

ՍՐԱՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 13
գյուղ Աշոցք

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 13-ի N 70-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

N	Օրը, ամիսը
1	24 հունվարի
2	27 մարտի
3	29 մայիսի
4	24 հուլիսի
5	25 սեպտեմբերի
6	27 նոյեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2019 թվականի N 71 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԿՐԱՍԱՐ, 8-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.67631 ՀԵԿՏԱՐ 08-058-0021-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԱՌՆԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գառնիկ Պապիկյանը դիմել է Աշոցք համայնք, 8-րդ փողոց, թիվ 3 հասցեում, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20112018-08-0036) հողամասին կից՝ սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին:

Ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 676.31 քառակուսի մետր (վկայական 05122019-08-0039), որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին համապատասխան՝ օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասը կարող է կառուցապատվել օժանդակ շինություններով, օգտագործվել բացառապես ընդլայնվող հողամասի վրա գտնվող շենքի կամ շինության սպասարկման կամ դրանց վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների իրականացման համար:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում:

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի հ.550-Ն

որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հաշվի առնելով քաղաքացի Գառնիկ Պապիկյանի 2019 թվականի դեկտեմբերի 12-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին, ***որոշում է***.

1. Թույլատրել Աշոցք համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի գյուղ Կրասար 8-րդ փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.067631 հեկտար 08-058-0021-0011 կադաստրային ծածկագրով հողամասը /վկայական 05122019-08-0039/ բնակելի տան տնամերձ հողամասի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գառնիկ Պապիկյանին 97390 /ինսունյոթ հազար երեք հարյուր ինսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՎԱՂԻՆԱԿ ԱԲՐԵՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՇԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ԵՍԱՅԻ ԵՍԱՅԱՆ
ՍՐԱՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 13
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2019 թվականի N 72 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՇՈՑՔ), ՈՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ Է ԵՂԵԼ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Տիգրան Տոնականյանը, իր 2019 թվականի դեկտեմբերի 12-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Աշոցք համայնքի սեփականությունը համարված **176.12** քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի շինության (նկուղ՝ 88.06 քառակուսի մետր, ավտոտնակ՝ 88.06 քառակուսի մետր) և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0033-0005 կադաստրային ծածկագրով **0.024828** հեկտար մակերեսով հողամասի (վկայական N 10122019-08-0045, անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, ավտոտնակ 2, ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին, ***որոշում է***

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **176.12** քառակուսի մետր

արտաքին մակերեսով ավտոտնակը (նկուղ՝ 88.06 քառակուսի մետր, ավտոտնակ՝ 88.06 քառակուսի մետր) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0033-0005 կադաստրային ծածկագրով 0.024828 հեկտար մակերեսով հողամասը (վկայական N 10122019-08-0045, անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, ավտոտնակ 2), գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով **113 246 (մեկ հարյուր տասներեք հազար երկու հարյուր քառասունվեց)** Հայաստանի Հանրապետության դրամ, արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Տիգրան Տոնականյանին (անձնագիր՝ AS 0330521, բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետութիուն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, քոթեջ 1, բնակարան 2):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՎԱՂԻՆԱԿ ԱԲՐԵՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՇԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԵՍԱՅԻ ԵՍԱՅԱՆ

ՍՐԱՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 13
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2019 թվականի N 73- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 51-Ն որոշման մեջ կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) «Համայքի բյուջեի եկամուտները» հատված 1-ի 1255 տողում լրացնել «12881.2» թիվ:
2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ի բաժին 04, խումբ 3, դաս 5, 2435 տողում «5000.0» թիվը փոխարինել «10482.2» թվով:
3) Նույն հատվածի բաժին 04, խումբ 5, դաս 1, 2451 տողում «15980.0» թիվը փոխարինել «18294.0» թվով:
4) Նույն հատվածի բաժին 08, խումբ 2, դաս 3, 2823 տողում «12515.0» թիվը փոխարինել «17600.0» թվով:
5) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ի հոդված 4112 4112 տողում «5653.2» թիվը փոխարինել «5751.7» թվով:

6) Նույն հատվածի հոդված 4212 4212 տողում «9776.0» թիվը փոխարինել «9696.0» թվով:
7) Նույն հատվածի հոդված 4214 4214 տողում «570.0» թիվը փոխարինել «549.1» թվով:
8) Նույն հատվածի հոդված 4221 4221 տողում «390.0» թիվը փոխարինել «392.4» թվով:
9) Նույն հատվածի հոդված 4241 4241 տողում «3300.0» թիվը փոխարինել «3800.0» թվով:
10) Նույն հատվածի հոդված 4269 4268 տողում «18244.0» թիվը փոխարինել «17744.0» թվով:
11) Նույն հատվածի հոդված 5115 5112 տողում «27500.0» թիվը փոխարինել «32982.2» թվով:
12) Նույն հատվածի հոդված 5121, 5121 տողում «6300.0» թիվը փոխարինել «8614.0» թվով:
13) Նույն հատվածի հոդված 5113, 5113 տողում «13007.7» թիվը փոխարինել «18092.7» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՎԱՂԻՆԱԿ ԱԲՐԵՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՇԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ԵՍԱՅԻ ԵՍԱՅԱՆ
ՍՐԱՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 13
գյուղ Աշոցք